

UDC 37.016:811.512.162

DOI 10.46991/educ-21st-century.v6.i2.43

**«ԱՂԲԵԶԱՆԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆՔԱՅԻՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Միրզոյան Էլինա

բան. գիտ. թեկնածու, դոցենտ,

ԵՊՀ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,

Հայաստանի Հանրապետություն,

elina-mirzoyan@ysu.am

<https://orcid.org/0000-0001-8263-6843>

Ամփոփում

Հետազատության նպատակն է ուսումնասիրել, ներկայացնել «Աղբեջաներեն» առարկայի դասավանդման որոշ առանձնահատկություններ, առարկայով պայմանավորված որոշ հիմնախնդիրներ, ինչպես նաև առաջադրել որոշ անվտանգային հարցեր, որոնք պետք է դիտարկել քննվող թեմայի համատեքստում: Առաջադրած խնդիրներին տալիս ենք նոր մոտեցումներ, ուշադրության արժանի հարցադրումներ, որոնք ենթադրում են սևեռված, հետևողական դիրքորոշում, քանի որ քննվող հարցերը ոչ միայն խնդիր են անձի մասշտաբով, այլև ազգի: Աղբեջաներենը միայն լեզվաբանության/լեզվագիտության շրջանակում դիտարկելը նեղ է, այն պետական ռազմավարական շրջանակից չպետք է դուրս բերել, հետևապես առաջադրում ենք լեզվով պայմանավորված անվտանգային սոցիալ-հոգեբանական, տեղեկատվական, ազգային-մշակութային, էթնոհոգեբանական, տնտեսական, ռազմական և այլ ոլորտի խնդիրներին առնչվող հարցադրումներ:

Անդրադարձել ենք առարկայի շրջանակում պահանջվող ռազմավարական դիրքորոշումներին, անշրջանցելի առանձնահատկություններին, դրսևորումներին, ցանկալի մոտեցումներին: Առարկան պահանջում է լայն, շրջահայաց ընկալողականություն՝ սկսած լեզվաբանական/լեզվագիտական, ավարտած էթնոհեբանական, ազգային-մշակութային, պետականագիտական և այլ ոլորտներից: Առարկան ինքնաբերորոշ է. առարկայի դասավանդման նպատակը, խնդիրները, արդյունավետությունը, կրթական վերջնարդյունքներն ապահովելու համար պետք է հաշվի առնել լեզվի և լսարանի (ռուհեր (ռազմական ուսումնական հաստատություններ) և բուհեր) ինքնաբերորոշությունը: Դասավանդման ճիշտ ծրագրավորման արդյունքում լեզվի իմացության կիրառության ոլորտն ընդլայնվում է:

Մեր հետազոտությունը կատարվել է ռուհում դասավանդման տարիներին մեր կատարած վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, լսարաններում արձանագրած արդյունքների ու դիտարկումների հիմքով, ինչպես նաև երկար տարիներ կրթական միջավայրում գործունեության շրջանակում ոլորտի շարժընթացին հետևելով: Քննվող խնդիրները մշտապես պետք է լինեն/պահվեն ոչ միայն ոլորտի, այլև պետության ռազմավարական քայլերի շրջանակում՝ պետական խիստ վերահսկողությամբ: Հիմնախնդիրների առաջադրմամբ ներկայացնում ենք եզրահանգիչ դրույթներ, առարկայի վերաբերյալ մոտեցումների վերանայում: Առաջարկում ենք քննվող թեմայի շրջանակում դիտարկել նաև լեզվական անվտանգության հարցերը, աղբեջաներենի իմացության ապահովման անվտանգ միջավայրը, ինչպես նաև արդյունքների արդյունավետ ապահովման խնդիրները:

Անդրադառնալով առարկայով պայմանավորված հիմնախնդիրներին, թեմայից բխող բազմակողմ խնդիրներին՝ ներկայացնում ենք դիտարկումներ, մոտեցումներ: Առարկան ենթադրում է կարևորված վերաբերմունք, միջգիտակարգային նշանակություն, անվտանգային հարցեր, խիստ պրոֆեսիոնալիզմ, պատրաստված մասնագետների ներգրավում:

Բանալի բառեր՝ աղբբեջաներեն, լեզվաքարոզչություն, լեզվական անվտանգություն, մասնագիտական լեզու, ռազմական աղբբեջաներեն, Աղբբեջան, դասավանդման հիմնախնդիրներ, հայկական տեղանունների աղբբեջանականացում, աղբբեջանական հակահայ և հայատյաց լեզվաքարոզչություն:

Համառոտ ներածական: Մեր ողջամտության սահմանները (մեր գիտակցված, մասամբ գիտակցված և չգիտակցված մոտեցումը)՝ որպես պատկերացումների համակարգ, պետք է սկսվեն ազգային անվտանգության ոչ թե անհավասարակշիռ, այլ գիտակցված գործունեության կիրառությունից, ինչն օրգանական իրողություն է մեր ժողովրդի անվտանգ կենսագործունեության ու հարածագող այլ խնդիրների լուծման տեսանկյուններից: Այսինքն՝ աղբբեջաներենի դասավանդումը պահանջում է ոչ միայն անհատական, այլև համակարգային մոտեցում, որը պետք է լինի պետական հսկողության ներքո:

Այսինքն՝ ի՞նչ մոտեցումներ ենք առաջադրում՝

- չվախենալ բարձրաձայնել ոլորտում առկա խնդիրները,
- վերանայել առարկայի վերաբերյալ մոտեցումները, ավելին՝ ժամանակավրեպ մոտեցումները,
- առաջադրել եզրահանգիչ դրույթներ,
- գիտակցել, որ այս ուղղությամբ հիմնախնդիրները մասնավոր չեն. դրանք մեր պետության անվտանգությանն ուղղված խնդիրների համախումբ են,
- լինել իրատես, գործնական՝ զերծ մնալով հուզական, պաթոսաբուխ գնահատականներից և ցուցաբերելով դիվանագիտական, հայեցակարգային, համակարգային, մշակված, ուղեգծային դիրքորոշում,
- թշնամուն չթերագնահատել ու չգերագնահատել. փորձել համակողմանիորեն ճանաչել թշնամու ուժեղ և թույլ կողմերը՝ հստակորեն հասկանալու մեր անվտանգության սահմանները:

Հիմնախնդիրն առնչվող հետազոտությունների համառոտ նկարագիրը: Աղբբեջաներենի դասավանդման անվտանգության հիմնախնդիրը՝ որպես գիտական հետազոտությունների նյութ, սակավ, թույլ տրվի ասել, բացարձակ ուսումնասիրված չէ, թեև մեր օրակարգային քննարկվող խնդիրներից է: Առարկայի կարևորությունը մշտապես շեշտադրված է եղել մեր բուհերում, ռուհերում: Ինչպես նաև վերջին տարիներին մասնավոր շրջանակներում է զգացվում առարկայի դասավանդման ակտիվություն, ինչը, սակայն, կարող է ածանցել անվտանգության խնդիրներ. լեզվաուսուցման անվերահսկելի տիրույթ է ձևավորվում, որի շրջանակում լեզուն դասավանդողների թե՛ մասնագիտական, թե՛ անվտանգային հարցեր են առաջանում: Այս մասին մենք խոսում ենք համապատասխան հատվածներում: Հաճախ մասնավոր տիրույթում լեզվի մասնագետների ոչ միայն ոչ պրոֆեսիոնալիզմն է նկատվում, այլև այլ ածանցյալ թերացումներ:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել քննվող առարկայի (մեզ հայերիս համար ռազմավարական նշանակության) դասավանդման ընթացքում երևան եկող հիմնախնդիրները, ընդհանուր առմամբ, առարկայի ուղղությամբ առաջադրել մոտեցումների վերանայման անհրաժեշտության խնդիրը, հիմնավորել մեր մոտեցումների արդյունավետությունը:

Ներկայացված հիմնախնդիրների համատեքստում ու առարկայի դասավանդման մեր փորձի արդյունքում առաջարկում ենք խնդիրների լուծման տարբերակներ/մոտեցումներ, հիմնավորված դիտարկումներ, առարկայի ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների վերանայում: Ինչպես նաև հետազոտության նպատակն է ուշադրությունը կենտրոնացնել ոչ միայն լեզվի կարևորության, այլև դրան գուգահեռվող և ենթադրաբար մի շարք խնդիրների վրա:

Հետազոտության նորույթը: Առարկայի առանձնահատկություններով, կարևորությամբ և տարածաշրջանային սպասված-չսպասված ելքերով պայմանավորված՝ առաջադրում ենք լեզվի վերաբերյալ մոտեցումների վերանայման և առարկայի վերակարևորման խնդիրը: Հետազոտել և ներկայացրել ենք առարկայի այն հիմնախնդիրները, որոնք շարունակում են ուղեկցել պատմական անդառնալի փուլերն անցնելուց հետո անգամ, մեր մասնագիտական դիտարկումների արդյունքում վեր ենք հանել առարկայով պայմանավորված այն խնդիրները, որոնք ոչ միայն ուսումնական են, այլև պետության անվտանգության տեսանկյունից՝ օրակարգային: Կոնկրետ աղբյուրներ են դասավանդման և աղբյուրների վերաբերյալ կան որոշ գիտական հոդվածներ [4,5,6,7,8,14], սակայն չենք կարող շրջանցել և չկարևորել այն փաստը, որ անվտանգության սահմաններ կան, որոնցում առանցքային դերակատար է աղբյուրների իմացությունը, չիմացությունը կամ թերիմացությունը:

Հիմնական նյութի շարադրանքը և հիմնախնդիրը: Ներկայացվող հիմնախնդիրները ոչ միայն դասավանդման, այլև առարկայի շուրջ և առարկայից ածանցվող մոտեցումների համախումբ է:

Այսպես, առկա հիմնախնդիրներից են.

- Թուրք-աղբյուրների ռազմաքաղաքական տանդեմի՝ Արցախում ցեղասպանական գործողությունների իրագործման պատմական փաստի և տարածաշրջանային անվտանգության պայմաններում դեռ քննարկել աղբյուրների իմացության կարևորության կամ անկարևորության մասին:
- «Աղբյուրներ» առարկայի դասավանդման կարևորում՝ առանց պետական հսկողության կազմակերպման ու մասնագետների ձևավորման համակարգային մոտեցման:
- Աղբյուրների դասավանդման ինքնագործունեություն և անվերահսկելիություն:
- Հաճախ աղբյուրներն դասավանդողների ոչ պրոֆեսիոնալիզմ, ինչից կարող են առաջանալ լրջագույն խնդիրներ՝ հաճախ հաշվի չառնելով թիրախավորված լսարանն ու նրա առանձնահատկությունները:
- Անհերքելի է, որ մեզանում աղբյուրներն դասավանդողները հիմնականում եղել են Բաքվի հայերը կամ նրանց ընտանիքներում լեզվին վարժ տիրապետող ժառանգները, որոնք գուցե լեզվակիր/լեզվախոս են, սակայն երբեմն չեն տիրապետում լեզվի փոխանցման/դասավանդման մեթոդներին, հմտություններին, սակայն կարող են լինել լավ թարգմանիչներ, բայց ոչ՝ դասավանդողներ: Նկատառում՝ անքննարկելիորեն կարևոր է նրանց իմացությունը օգտագործել, սակայն նման դեպքերում մեթոդական ցուցումների, մանկավարժական հմտություններ ունեցողների հետ համագործակցության փուլ պետք է անցնեն: Ոչ թե լեզուն փոխանցելու, այլ լեզուն ինչպես փոխանցելու համար անհրաժեշտ մասնագիտական հմտություններ են պահանջվում՝ մեթոդական փուլ, որն անցնելուց հետո միայն կարելի է կազմակերպել դասավանդման գործընթացը, ինչպես

նաև անվտանգության նորմերի գիտակցում: Վերջիններիս իմացությունը կարելի է որոշակիորեն կիրառել նաև աղբբեջաներենի դասավանդման արտասանական, լսողական բաղադրիչի ընթացքում:

Ընդհանրապես, վերոնշյալ իրավիճակը բնորոշ է նաև Սփյուռքին, երբ, օրինակ՝ հայերենը պահպանելու համար հայկական դպրոցում կարող է, օրինակ, դասավանդել ժամանակին Հայաստանում ֆիզիկայի ուսուցիչ աշխատած մեկը: Սփյուռքի պարագայում, ինչ-որ կերպ ընդունելի է այդ երևույթը, սակայն պետության դեպքում՝ ոչ ցանկալի, քանի որ համապատասխան մասնագետներ չպատրաստելու ու խնդիրը չլուծելու դեպքում դաշտը բաց է մնում:

- Դասագրքերի սակավություն: Աղբբեջաներենի դասագրքերը՝ ուսումնական ձեռնարկները [1, 3], գրուցարանները [9] սակավ են: Ա. Մայիլյանի՝ 2014 թ. լույս տեսած աղբբեջաներենի ուսումնական ձեռնարկը [1] առաջինն է. այն բաղկացած է նաև ռազմական բաղադրիչից. «Հայոց դարավոր պատմության վերջին հազարամյակը վկայում է պատմական ճշմարտությունը, որ հայ ժողովուրդն ու հայոց պետականությունն անասելի կորուստներ են կրել թյուրքալեզու վայրենաբարո ժողովուրդների ասպատակությունների հետևանքով: Այս իրողությունը մեզ պարտադրում է լինել առավել կազմակերպված, առավել հետևողական մեր ռիսերին թշնամիների սանձազերծած ոտնձգությունների դեմ: Առաջին կարևոր նախաձեռնությունը նրանց լեզուների ուսումնասիրությունն է ու դրանց տիրապետելը, որպեսզի պայքարը տարվի առավել խորությամբ և լինի առավել նպատակային: Ներկա փուլում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան պետության համար ռազմաքաղաքական անհրաժեշտություն է դարձել երկրի պաշտպանության հզոր կառույց Ազգային բանակի կուրսաստների ու սպաների՝ աղբբեջաներենի ուսուցումը:

Արդի ժամանակաշրջանում, երբ մարդկությունը մշտական ռազմական մրցավազքում է, և հատկապես իմանալով Թուրքիայի ու Աղբբեջանի Հանրապետության վաղուց ի վեր վարած հայակործան քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ՝ պարտավոր ենք ունենալ այդ երկրների լեզվին տիրապետող բանիմաց և գրագետ կադրեր ու հրամանատարական կազմ:

Ներկայումս հրամայական պահանջ է հայոց բանակի ապագա սպաների՝ ռազմական համալսարանի կուրսաստների, աղբբեջաներենի ուսուցումը, որպեսզի ռազմական ոլորտում ունենանք այդ լեզվին տիրապետող մասնագետներ և նրանց ջանադիր աշխատանքով օպերատիվորեն բացահայտենք մեր դարավոր թշնամու հայակործան նկրտումները»: [1, էջ 2]

Ձեռնարկը բաղկացած է գործնական ու տեսական հատվածներից: Գործնականը վերաբերում է «սահմանային գոտիներում հայ սպաների անմիջական շփումներին՝ հակառակորդի դասալիքներից, ռազմագերիներից և տվյալ երկրների քաղաքացիներից օպերատիվ տեղեկություններ քաղելու համար», իսկ տեսականը՝ «ժամանակակից բոլոր լրատվամիջոցներին, տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ հեռուստատեթեր, ռադիոհաղորդումներ, թերթեր, պարբերականներ, համակարգչային ինտերնետ կապեր և այլն, որոնց միջոցով պետք է պայքարել հակառակորդի ապատեղեկատվության դեմ, լուսաբանել ու հրապարակել բոլոր վիճելի հարցերի արդարացի ու ողջամիտ մեկնաբանությունները: Մեր ժամանակներում այն անվանվում է տեղեկատվական պատերազմ, այս պատերազմում մենք նույնպես պարտավոր ենք հաղթանակ տանել» [1, էջ 2]:

- Համագործակցաբար աշխատելու բացակայություն:

- Հաճախ չեն կարևորվում առարկայի ինքնաբերորշ առանձնահատկությունները: Նաև դասավանդման ընթացքում մասնագետները հաճախ նկատի չեն առնում, որ աղբբեջաներենը ուղեկցող լեզու չի եղել կրթական համակարգում (անգլերեն, ռուսերեն և այլն):
- Դասավանդող մասնագետը պետք է պահպանի անվտանգության սահմանները. հատկապես ռազմական ոլորտում դասախոսները դառնում են երրորդ աստիճանի տեղեկություններ կրողներ. մասնագետների ընտրության հարցում պետք է ուշադիր լինել նաև այս դիտակետից:
- Մեթոդական թերացումներ, կրթագիտական, մանկավարժական նորագույն չափորոշիչներին անհամապատասխանություն, խմբային առանձնահատկությունների շրջանցում: Օրինակ՝ դասագրքերի պարագայում լեզվի ուսուցման մակարդակները անհստակ են:
- Մասնագիտական լեզու հասկացության շրջանցում: Այսինքն՝ մյուս լեզուների պարագայում ևս դասախոսները հաճախ որպես կրկնուսույց են՝ շրջանցելով մասնագիտական լեզու ասվածը, իսկ աղբբեջաներենի պարագայում բացառվում է կրկնուսույց լինելը, քանի որ այն հանրակրթական ոլորտում ուղեկցող լեզու չէ, ամեն դեպքում՝ մինչև վերջին տարիները:
- Նկատելի է, որ լեզվաքաղաքական խոսույթի կարևորությունն ընկալելի չէ անգամ մասնագիտական շրջանակում՝ լեզվաքարոզչության բացակայություն: Մեզանում լեզվի քաղաքական գործառույթը՝ որպես առանձին գործառույթ, բավականաչափ ուսումնասիրված չէ:

Ընդհանրապես, թուրք-աղբբեջանական հայատյացության պետական քարոզչության ուղղություններից մեկը լեզվաքարոզչությունն է: Աղբբեջանը լեզվի քաղաքական գործառույթը խիստ ակտիվ է պահում. լեզվաքարոզչության շրջանակում թուրքական խոսույթին բնորոշ օրինակներով ձևավորում է լեզվական արտահայտչաձևեր, հակահայ, հայատյաց թեզեր, սաղորիչ արտահայտություններ, էպիտետավորումներ, պիտակավորումներ, ժխտողական դրույթներ, կեղծ թեզեր և այլն՝ թիրախում պահելով ոչ միայն Արցախի մշակութային ժառանգությունը, տեղանվանաձևերը, պատմական փաստերը, այլև Հայաստանի Հանրապետությունը: Այս համատեքստում, օրինակ՝ «Qarabağ bizimdir, Qarabağ Azərbaycanıdır!» («Ղարաբաղը մերն է, Ղարաբաղն Աղբբեջան է») ժխտողական թեզը: Մրա նախատիպը, մեր դիտարկմամբ, թուրքական խոսույթի ձևակերպումներից «Իզմիրը¹ մերն է» թեզն է: Այն Զմյուռնիայի համար թուրքական, այսպես կոչված, պայքարի բացօթյա հանրահավաքների ժամանակ մշակված թեզ է: Թուրքական քարոզչական հանրահավաքներում հատուկ մշակված լեզվական ձևակերպումներ էին մի քանի անգամ կրկնել տալիս հանրահավաքի մասնակիցներին, ինչպես, օրինակ, ելույթի ավարտին՝ «Իզմիրը մերն է»: Թուրքական լեզվամշակույթում քաղաքական խոսույթը, որպես կանոն, ավանդաբար փոխանցվում է. «...մերն է» ձևակերպումը շրջանառության մեջ է դրվում նաև այլ հանրահավաքների ժամանակ: Այն դիտարկում ենք նաև աղբբեջանական այսպես կոչված պայքարի համատեքստում ներդրված «Qarabağ bizimdir» («Ղարաբաղը մերն է») լեզվաքարոզչական ձևակերպման նախատիպ: Թուրք-աղբբեջանական լեզվամշակույթի հիմքը նույնական է:

Այս թեման բազմագիտակարգային է, որն առանձին հետազոտական մոտեցում է պահանջում:

¹ Զմյուռնիա:

Եզրակացություն և եզրահանգիչ դրույթներ

Դիտարկումներ առարկայի դասավանդման որոշ առանձնահատկությունների ու մոտեցումների շուրջ: Կրթական ծառայությունների շահառուները, լինեն ուսանողներ, դասախոսներ, թե գործատուներ, ձգտում են կրթական ոլորտում տեսնել դինամիկ, արդյունավետ զարգացումներ, ինչի ուղղությամբ այս համատեքստում՝

- առանցքային համարել լեզվին բնորոշ առանձնահատկությունները,
- առարկայի դասավանդումը պահանջում է բազմակողմանի տեղեկացվածության ապահովում, համագործակցային ուսուցում, խմբային լայնածավալ քննարկումներ, բանավեճեր և այլն,
- մասնագետների ընտրության հարցում, չհամարել ծայրահեղություն, սակայն կարողանալ հասկանալ հետևյալ հարցադրումը՝ աղբյուրներում հա՞յ, թե՞ հայախոս աղբյուրների, ինչպես նաև պրոֆեսիոնալ մասնագետ,
- լեզվական անվտանգության հասկացության ընկալում, լեզվաքարոզչական խոսույթ (հայկական տեղանվանաձևների (ոչ արդբեջանականացված) կիրառություն և այլն: Լեզվական անվտանգությունը մեզանում մեծ մասով ընկալվում է միայն լեզուն անաղարտ, իր հարստությամբ և ազգային-մշակութային ինքնաբնորոշությամբ պահելու դիտակետից¹, սակայն լեզվական անվտանգության համատեքստում որպես երկրորդ դիտակետ կարելի է ընդունել լեզվի դերակատարումն անձի հոգեբանական, ֆիզիկական, տեղեկատվական, ազգային, տնտեսական, քաղաքական, միջազգային, էկոլոգիական, սոցիալական, տեխնիկական, այդ թվում՝ ավիացիոն, ռազմական և կյանքի այլ բնագավառներում անվտանգության ապահովման հարցում: Մեր հասարակության մեջ բառերի, արտահայտությունների զգույշ կիրառություն պետք է ձևավորել այս համատեքստում. դրանք, թեև կարող են բառարանային իմաստով ճիշտ լինել, սակայն մեզ համար՝ անթույլատրելի կիրառությամբ (մեր պատմության տեսանկյունից): Այսինքն՝ թուրք-աղբյուրական ժխտողական բառաֆոնդ չկիրառել ընդհանրապես, թուրքականի մասով ինչ-որ չափով հաղթահարված է խնդիրը (օր.՝ այսպես կոչված «Դոդու Անադոլուն»՝ «Արևելյան Անատոլիան»՝ որպես Արևմտյան Հայաստանի թուրքերեն թարգմանություն (թուրքերեն թարգմանության ճիշտ տարբերակը՝ «Բաթը Էրմենիսթան») երբեք չի կարող կիրառվել մեր՝ հայկական կողմում), աղբյուրականի մասով՝ հատկապես տեղանունների, սարերի, լեռների, մեր հասարակության մեջ երբեմն կիրառվում են աղբյուրական տեղանվանաձևները (ՔարվաճառՔելբաջար, Ակնա-Աղդամ, Մարտակերտ-Աղդարա և այլն): Այս ուղղությամբ նաև լեզվի ճիշտ ուսուցման ծրագրային քաղաքականությամբ կարող ենք ձևավորել ռազմավարական հստակ դիրքորոշում, մինչդեռ դասավանդողն ինքն էլ պետք է պատրաստված և տեղեկացված լինի խնդրի այդ կողմով,
- ռազմական ոլորտում լեզվի դասավանդման մեջ խիստ կարևորելով մասնագիտական բաղադրիչը՝ զինվորականների հետ մասնագիտական նուրբ/զգայուն թեմաների ուղղությամբ խորհրդակցական համագործակցություն,
- լինել խիստ օբյեկտիվ գնահատման հարցում, քանի որ սովորողի անվտանգության սահմանը կարող է խախտվել,
- կարողանալ աշխատել նաև հայաստանաբնակ լեզվակիրների հետ,

¹ Այս դիտանկյունից կարելի է սահմանել որպես լեզվի անվտանգություն:

- ծրագրերի վերանայում. կարողանալ չկտրվել համաժամանակյա իրադարձություններից՝ աշխատել ՁԼՄ-ներում, համացանցային տիրույթում մասնագիտական տերմինաբանության, բառաֆոնդի/մասնագիտական բառաֆոնդի, արագ զարգացող բառապաշարային համալրումների շուրջ, քանի որ աղբյուրներն են գլխավորապես բառապաշարային փոփոխականությունը շատ հստակ երևում է մամուլից:

Եզրահանգիչ դրույթներ և/կամ դիտարկումներ

- դրսևորել համակարգված, նպատակային, կրթության որակի բարձրացմանն ուղղված մոտեցում,
- չանտեսելով առկա խնդիրները՝ ընդունել, որ կա այդ խնդիրները վերանայելու և լուծելու անհրաժեշտություն,
- վերապատրաստման այլընտրանքային ծրագրերի, Արդեջանի ռազմական աղբյուրներից օգտվելու լայն հնարավորության բացակայության շուրջ աշխատանքների կազմակերպված աջակցում,
- ապահովել լսարանային առավելագույն փոխգործություն/ինտերակտիվություն,
- դասավանդման գործընթացում սովորողի համար շահադրդման մթնոլորտ ձևավորելով ոչ թե վերջինիս գնահատականով պայմանավորված, այլ լեզվի վարժ իմացության կարևորությամբ պայմանավորված՝ գիտակցելով, որ այդ լեզվի չիմացությամբ/ սխալ իմացությամբ վերջիններիս անվտանգության համար սպառնալիք կարող է ստեղծվել (հատկապես՝ ռուսների դեպքում, իսկ բուհերի՝ սոցիալ-հոգեբանական/էթնոհոգեբանական),
- ստեղծել հիմնարար մոտիվացիա լեզվի իմացության անհրաժեշտության ուղղությամբ և պահպանել այն,
- հարստացնել դասավանդման գործիքակազմը,
- լեզվաբարոզչության ռազմավարական դրսևորում կամ լրացումներ,
- ներկայացված խնդիրները պետական գործունեության հետևողական առանցքում պետք է լինեն՝ համապատասխան ոլորտների գործադրմամբ,
- Հայաստանում աղբյուրներն են իմացությունը և ուսուցումը պետության անվտանգության համատեքստից դուրս չդիտարկել և չպահել,
- արժարժված խնդիրները շարունակելի են և ենթակա լրացումների կամ առաջարկների:

ABOUT SOME MAIN SECURITY PROBLEMS AND PECULIARITIES OF TEACHING THE SUBJECT "AZERBAIJANI LANGUAGE"

Mirzoyan Elina

*PhD in Philology, Associate Professor,
YSU, The Armenian Genocide Museum-Institute,
Republic of Armenia
elina-mirzoyan@ysu.am*

Summary

The aim of our research is to study and present the peculiarities of teaching the subject "Azerbaijani", some problems caused by the subject, as well as to propose some security issues that should be considered in the context of the examined topic. We give new approaches to the presented problems, questions worthy of attention, which imply a focused, consistent position, because the examined issues are not only a problem on a personal scale, but also on a national scale. It is narrow to consider the Azerbaijani language only in the framework of linguistics/linguistics, it should not be taken out of the state strategic framework; therefore we

raise questions related to language-related security, socio-psychological, informational, national-cultural, economic, military and other issues.

We have referred to the strategic positions required within the scope of the subject, unavoidable features, manifestations, desired approaches. The subject requires a broad, circumspect receptivity, starting from linguistics/linguistics, ending with ethno-linguistics, ethno-cultural, political science and other fields. The subject is self-explanatory. In order to ensure the purpose, problems, effectiveness, and educational outcomes of teaching the subject, the identity of the language and the audience (military educational institutions and universities) should be taken into account. As a result of the correct planning of teaching, the field of application of language knowledge is expanded.

Our research was done on the basis of statistical data collection, summarization, results and observations recorded in the classrooms during the years of teaching in military educational institutions, as well as following the dynamics of the field within the framework of activities in the educational environment for many years. The examined problems must always be within the framework of strategic steps not only of the sector, but also of the state. There should be a strict state control approach in this direction. By proposing the main problems, we present concluding provisions, a review of approaches to the subject. We suggest that within the framework of the examined topic, we also consider issues of language security, a safe environment for ensuring the knowledge of the Azerbaijani language, as well as the problems of effective assurance of results.

Referring to the problems caused by the subject, the multifaceted problems arising from the subject, we present observations, approaches. The subject implies an important attitude, interdisciplinary importance, security issues, strict professionalism, involvement of trained specialists.

Keywords: *Azerbaijani language, linguistic propaganda, linguistic safety, specialty language, military Azerbaijani, Azerbaijan, challenges of teaching, Azerization of Armenian toponyms, Azerbaijani anti-Armenian and Armenophobic language propaganda.*

О НЕКОТОРЫХ ОСНОВНЫХ ПРОБЛЕМАХ БЕЗОПАСНОСТИ И ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «АЗЕРБАЙДЖАНСКИЙ ЯЗЫК»

Мирзоян Элина

кандидат филологических наук, доцент
ЕГУ, Музей-институт Геноцида армян, Армения
elina-mirzoyan@ysu.am

Аннотация

Цель нашего исследования – выявить особенности преподавания дисциплины «Азербайджанский язык», представить возникающие в процессе преподавания проблемы, а также предложить решение некоторых вопросов безопасности, которые следует принимать во внимание в контексте рассматриваемой темы. Для этого мы считаем необходимым в первую очередь осветить представленные проблемы не только личностного, но и национального масштаба, проблемы, решение которых предполагает целенаправленные и последовательные действия. Рассматривать азербайджанский язык только в рамках языкознания/лингвистики неверно, его не следует выводить за рамки стратегической политики государства. Поэтому мы поднимаем вопросы, связанные с языковой, социально-психологической, информационной, национально-культурной безопасностью, а также экономические, военные и другие вопросы.

В статье мы упомянули стратегические позиции в рамках преподавания дисциплины и их особенности. Предмет требует глубокого понимания, осмотристельности, владения знаниями и по языкознанию/лингвистике, и по этнолингвистике, этнокультурологии, политологии и знаниями в других областях. Для достижения поставленной цели, решения задач, получения эффективных образовательных результатов при обучении предмету необходимо учитывать своеобразие языка и аудитории (военные вузы и университеты). В результате правильного планирования процесса обучения расширяется область применения знаний языка обучающегося.

Наше исследование было проведено на основе сбора статистических данных, их обобщения, анализа результатов и наблюдений, полученных нами за годы преподавания дисциплины в военных вузах, а также отслеживания динамики развития отрасли в рамках нашей деятельности в образовательной среде. Рассмотренные проблемы всегда должны находиться в рамках стратегических интересов не только отрасли, но и государства. В этом направлении должен быть строгий государственный контроль. Предлагаем в рамках рассматриваемой темы обратить внимание на вопросы языковой безопасности, что позволит создать благоприятную среду для преподавания азербайджанского языка в целях обеспечения наиболее эффективного усвоения учащимися этой дисциплины.

При рассмотрении проблем, возникающих в процессе преподавания дисциплины, мы используем свои наблюдения за период преподавания этого предмета и предлагаем решение этих проблем. Данный вопрос является актуальным. Решить его можно, привлекая подготовленных, высококвалифицированных специалистов в разных областях знаний.

Ключевые слова: *азербайджанский язык, языковая пропаганда, языковая безопасность, язык специальности, военный азербайджанский, Азербайджан, проблемы преподавания, азербизация армянских топонимов, азербайджанская антиармянская и арменофобская языковая пропаганда.*

Оգտագործված գրականության ցանկ

1. Մայիլյան Ա., Աղբբեջաներենի դասագիրք, Երևան, 2014:
2. Միրզոյան Է., Թուրք կանանց ներգրավվածությունը Զմյուռնիայի համար թուրքական հանրահավաքներում, «Յեղասպանագիտական հանդես», 11(1), 2023:
3. Մովսիսյան Լ., Աղբբեջաներենի դասագիրք. 2-րդ լրամշակված հրատ., Երևան, 2021:
4. Մովսիսյան Լ., Աղբբեջաներենի այբուբենի պատմության ուրվագծեր, «21-րդ դար» Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես, թիվ 4, 2008:
5. Մովսիսյան Լ., ԵՊՀ-ում աղբբեջաներենի դասավանդման խնդիրների ու մեթոդների շուրջ, «Արևելագիտության հարցեր», թիվ 17, 2021:
6. Մովսիսյան Լ., Ընդհանուր թուրքական լեզվի գաղափարը թուրք-աղբբեջանական հարաբերությունների համատեքստում. աղբբեջանական մոտեցումներ, «Հայկական բանակ» ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հանդես, N1-2, 2011:
7. Մովսիսյան Լ., Ժամանակակից աղբբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցների՝ քաղաքական և ռազմական բնույթի հրապարակումների բառապաշարային պատկերը, «Արևելագիտության հարցեր», թիվ 12, 2016:
8. Մովսիսյան Լ., Լեզվաքաղաքականությունը ժամանակակից Աղբբեջանում, «21-րդ դար» Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես, թիվ 3, 2009:
9. Մովսիսյան Լ., Հայերեն-աղբբեջաներեն զրուցարան, Երևան, 2022:
10. "Üsküdar'da İkinci Büyük Miting," Vakit, 21 Mayıs 1919, 1-2.
11. Graber D., "Political Languages". // Handbook of Political Communication. Beverly Hills, London: Sage Publication, 1981.
12. Гриценко Е.С., Язык и безопасность в контексте глобализации. Власть. 2011.
13. Исмаилова Л.Г., Насилов Д.М., Азербайджанский язык для стран СНГ, Восточная литература РАН, 2009.
14. Мовсисян Л. Р., Современная лексика азербайджанского языка: язык электронных СМИ, Актуальные вызовы современной науки, Международная научно-практическая интернет-конференция, 2016.
15. Худазаров Т.М., Самоучитель азербайджанского языка, Баку: Муаллим, 2006.

Получено: 08.09.2024

Рассмотрено: 25.09.2024

Принято: 21.10.2024

Received: 08.09.2024

Reviewed: 25.09.2024

Accepted: 21.10.2024



© The Author(s) 2024

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License